«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Խաղային տեխնոլոգիաների կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Շաքե Սահակյան

Ուսումնական հաստատություն՝ Պարտիզակի Ահարոնի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3
Խաղային տեխնոլոգիաների կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում..... 4
Խաղային գործունեություն.....5
Խաղային տեխնոլոգիա.....6
Խաղային տեխնոլոգիաները տարրական դպրոցում..... 9
Խաղային տեխնոլոգիաները միջին և ավագ դպրոցում.....11
Խաղային մեթոդներ և մեթոդական հնարներ.....12
Խաղերի դասավանդման եղանակները..... 13
Խաղը որպես սովորելու միջոց..... 14
Խաղի օգտակար գործոնները..... 15
Եզրակացություն..... 16
Գրականության ցանկ..... 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դպրոցում խաղային տեխնոլոգիաների կիրառումը կարևոր պայման է ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման, անձնակենտրոնության ապահովման համար:

Այսօր յուրաքանչյուր մանկավարժ, այդ թվում նաև տարրական դպրոցի ուսուցիչ, նպատակադիր է ուսուցման գործընթացի կատարելագործման, արդիականացման առավել արդյունավետ ուղիների որոնման, ինչը կնպաստի սովորողների պահանջմունաքադրդապատճառային ոլորտի խթանմանը, առաջադիմության բարձրացմանը, կրթության որակի բարելավմանը: Այդ առումով առաջնային է դառնում ուսուցման խաղային տեխնոլոգիաների ներդրումը տարրական դպրոցի կրթադաստիարակչական գործընթացին:

Ուսուցման ժամանակակից այս տեխնոլոգիան դասավանդողի գործողությունների հաջորդական, փոխկապակցված համակարգն է, որի նպատակը մանկավարժական այս կամայն խնդրի լուծումն է:

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը դասերի ընթացքում նպաստում է աշակերտների ակտիվացմանը՝ մարմնաշարժողական և իմացական առումներով: Ակտիվությունն անհրաժեշտ պայման է ժամանակակից մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Խաղի մուտքը դասարանում ստեղծում է նոր,յուրահատուկ միջավայր: Աշակերտներն ազատ արտահայտում են իրենց մտքերը՝ աննկատելիորեն ընդգրկվելով ակտիվ ուսուցման մեջ: Խաղի կիրառումը ուսուցման գործընթացում հնարավորություն է ընձեռում ուսուցչի աշխատանքն առավել բազմազանու ճկուն դարձնել:

Խաղային դաստիարակչություն հասկացությունը ներառում է մեթոդների մեծ խումբ,որն ունի նպատակ՝ խնդրի ուղիղ կետին հասնելու և իրեն համապատասխանող դաստիարակչական արդյունք ստանալու:

ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Խաղային գործունեության հոգեբանական մեխանիզմները հենվում են աշակերտի ինքնադրսևորման, ինքնահաստատման, ինքնորոշման, ինքնակարգավորման, ինքնատիրապետման պահանջմունքների վրա: Մեծանուն հոգեբանները այսպես են բնորոշում խաղը.

Դ. ՈՒզնաձե <<Խաղը երեխայի պսիխոգեն վարքն է>>

Տ.Վիգուրսկի <<Խաղը երեխայի ներքին սոցիալականացման տարածք է, սոցիալական դիրքորոշումների յուրացման
միջոց>>

Ա. Ն. Լեոնտև <<Խաղը երևակայության մեջ անձի ազատության, անկրկնելի հետաքրքրությունների տարածքային
իրագործում է>>

Կրտսեր դպրոցական տարիքը երեխայի համար որպես առաջատար գործունեություն արդեն սկսվում է դառնալ ուսումը: Բայց այդ դպրոցականը, որը դեռ երեկ տարված էր խաղերով, չի կարող լիովին զերծ մնալ դրանցից: Այդ իսկ պատճառով երբ ուսուցումը ընթանում է խաղերով, դրանք երեխայի համար դառնում են ավելի հետաքրքիր, սրտամոտ ու ցանկալի: Երբ խաղը մուտք է գործում կենդանի մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում ստեղծվում է մի նոր միջավայր : Եթե ուսուցիչ-աշակերտ և նաև աշակերտ-աշակերտ հարաբերություններում մինչ այդ գոյություն ունեին ինչ- ինչ պատնեշներ, ապա դրանք աննկատելիորեն անհետանումեն: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ աշակերտներն անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը: Խաղն ունի մի այնպիսի հիանալի հատկություն, որ երեխային կարող է իր համար էլ աննկատելիորեն ընդգրկել ակտիվ ուսուցման ևնույնիսկ այս կամ այն <<պրոբլեմի>> լուծման ընթացքի մեջ: Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում՝ տարվելով

հետաքրքրաշարժությամբ և ավելի հեշտությամբ էլ մտապահում է առաջին անգամ տեսածն ու լսածը: Խաղային իրավիճակներում սովորողը դառնում առավել գործուն և ուշադիր :

Խաղերը հաճախ տեղեկատվական բնույթ են կրում և խաղի ընթացքում երեխան կարողանում է ազատ մտածել որևէ հարցի շուրջ, ստանալ նոր պատկերացումներ ,նորովի մոտենալ այս կամ այն երևույթին :

Քննարկման փուլում նա լսում է ուրիշների կարծիքները և նույն հարցի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ , ինքն էլ հնարավորություն ունի համագործակցելու ընկերների հետ և սեփական որոշում կայացնելու: Արդյունքում սովորողը ինքնավստահություն է ձեռք բերում և զարգացնում զննողականությունը:Դրա համար էլ առաջ են քաշվել մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

<<Առանց խաղի չկա և չի կարող լինել երեխայի մտավոր զարգացում: Խաղը մի հսկայական լուսավոր պատուհան է, որի միջոցով երեխայի հոգեկան աշխարհ է թափանձում կենդանի հասկացությունների,պատկերացումների համախումբ: Խաղը ջանասիրություն և հետաքրքրություն բոցավառող կայծ է>>:

Վ.Ա.Սուխոմլինսկի

Երեխայի կյանքում խաղային գործունեությունը, կատարում է մի շարք գործառույթներ.

- զվարճալի, այսինքն հաճույք է պատճառում, ոգևորում, հետաքրքրություն առաջացնում, ձգտում ինքնահաստատման, խաղային դժվարությունների հաղթահարմանը:
- կանխատեսող խաղի ընթացքում կարելի է ճանաչել իրեն , ցուցադել սեփական ուժերը վերականգնողական խաղի ընթացքում փոխվում են անձնային որակները , տեղի է ունենում անձի սոցիալականացում :

Այսպիսով, խաղի միջոցով ոչ միայն ուուցանվում և ամրապնդվում է դասանյութը, այլև այն օգնում է , որ աշակերտն աննկատ ձևով կարողանա հաղթահարել բարդ

ուսումնական խնդիրներ:

Ժամանակակից դպրոցում, որտեղ շեշտը դրվում է ուսումնական գործընթացի ակտիվացմանն ու ինտեսիվացմանը, խաղային գործունեությունը իրականացվում էհետևյալ դեպքերում.

- Որպես ինքնուրույն տեխնոլոգիա որևէ առարկայի, թեմայի յուրացման նամրապնդման ժամանակ:
- Որպես դաս կամ նրա մի մաս:
- Որպես արվեստային տեխնոլոգիայի բաղադրիչ:
- Որպես արտադասարանական աշխատանքի տեխնոլոգիա:

ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

<<Խաղն իր մեջ ընդգրկում է ինքնագործունեության կառուցվածքի բաղադրամասեր>>:

Ս.Լ.Ռուբինշտեյն

Այս ուսուցման նպատակային կողմնորոշիչներն են՝

- դիդակտիկ՝ մտահորիզոնի ընդլայնումը , ճանաչողական գործունեությունը, պրակտիկ գործունեության համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումը:

- Դիդակտիկ խաղի հիմնական նպատակներից մեկը սովորողներին առարկաների ,նրանց դասակարգման , նշանակության , հատկությունների , աշխատանքի տեսակների , բնության երևույթների և այլ երևույթների մասին նոր գիտելիքներ հաղորդելն է: Դիդակտիկ խաղն ուսումնական զբաղվածության ուրույն տեսակ է , որը կազմակերպվում է ուսուցողական խաղերի տեսքով ՝ իրականացնելով խաղային և ակտիվ ուսուցողական մի շարք սկզբունքներ : Դիդակտիկ խաղերի կիրառումը ամենից առաջ ունի մանկավարժական տեսանկյուն , ուղղվածություն ,քանի որ լուծում է մանկավարժական այնպիսի խնդիրներ , ինչպիսիք են.

1. Մանկավարժական բովանդակային խնդիրները՝ կապված գիտելիքների , կարողությունների, հմտությունների, արժեհամակարգի, ստեղծագործական գործունեության

համապարփակ ձևավորման հետ:

2. Մանկավարժակ աննպատակային խնդիրները՝ կապված մանկավարժական գործընթացի մարտավարական և ռազմավարական նպատակների հետ:

3. Մանկավարժական ռեսուրսային խնդիրները՝ կապված մանկավարժական գործունեության կազմակերպման և իրականացման արդյունավետ ընթացքի հետ:

Մանկավարժական իրավիճակային խնդիրներ՝ կապված տարբեր վիճահարույց իրավիճակների և համապատասխան վերլուծության, պատճառահետևանքային կապի բացահայտման, ինչպես նաև իրավիճակից դուրս գալու հետ:

Դիդակտիկ խաղերի մշակման մանկավարժական հիմքերն իրենց հերթին հենվում են կոլեկտիվ նպատակաուղղված, համընդհանուր նպատակներ հետապնդող և ակտիվ ուսումնական գործը նթացի վրա:

Դիդակտիկ խաղեր մշակելիս մանկավարժը հենվում է այն բանի վրա, որ ուսումնական գործընթացին մասնակիցները միասին համախմբվեն մեկ ընդհանուր գաղափարի շուրջ:

- <u>դաստիարակիչ</u>՝ ինքնուրույնության և կամքի դաստիարակումը, որոշակի բարոյական, գեղագիտական և աշխարհայացքային դիրքորոշումների ձևավորումը:

Այս խաղի արդյունքում գաղափարախոսություն է հանդիսանում մարդասիրական անձնային տեխնոլոգիան, որի նպատակային կողմնորոշիչներն են.

- Երեխայի անձնային որակների բացահայտման միջոցով նպաստել արժանապատիվ մարդու կայացմանը,զարգացմանն ու դաստիարակմանը:
- Երեխայի հոգու ազնվացումը:
- Երեխայի իմացական կարողությունների զարգացումը:
- Դաստիարակության իդեալը՝ ինքնադաստիարակությունն է:

<u>.զարգացնող</u>՝ ուշադրության, հիշողության, խոսքի, մտածողության, երևակայության, ստեղծագործական ընդունակությունների, օպտիմալ լուծումներ գտնելու կարողության զարգացումն է : Խաղի վրա հիմնված կրթությունը երեխաների մոտ ձևավորում է համագործակցելու կարողություն, ստեղծագործ միտք ու հետաքրքրասիրություն, իմիջիայլոց սրանք 21-րդ դարի աշխատուժի համար շատ կարևոր հմտություններ են:

Ուսուցումը հանդիսանում է երեխայի հոգեկան զարգացման անձնային որակների ամբողջության, կայացման շարժիչ ուժը: Զարգացնող խաղերը երեխային հատկացնում է շրջակա միջավայրի հետ համագործակցող սյուբյեկտի դեր:

Այդ համագործակցությունը ներառում է գործունեության բոլոր փուլերը, ինչպիսիք են

- նպատակադրումը
- պլանավորումը
- կազմակերպումը

- նպատակի իրագործումը
- գործունեության արդյունքների վերլուծումը:

Այս փուլերից յուրաքանչյուրը իր առանձնահատուկ ներդրումն ունի անձի զարգացման մեջ:

Օր.Նպատակադրման փուլում դաստիրակում են նպատակասլացություն, արժանապատվություն, հպարտություն ինքնուրույնություն, ինքնուրույնություն, կազմակերպվածություն և այլն:

Նպատակի իրագործման փուլում ձևավորվում են հարաբերության գնահատման չափանիշները՝աշխատասիրությունը, կարգապահությունը և ակտիվությունը:

Գործունեության վերլուծության փուլը ձևավորում է գնահատման չափանիշները, պատասխանատվություն, խիղճ , ազնվություն և այլն:

Ներկայումս զարգացնող ուսուցման վերաբերյալ մշակված են մի շարք տեսակներ, որոնք տարբերվում են իրենց նպատակային կողմնորոշիչներով, բովանդակությամբ և մեթոդիկայի առանձնահատկություններով:

Սոցիալականացող՝ հասարակական նորմերին և արժեքներին հաղորդակից դարձնելը, միջավայրի պայմաններին ադապտացվելը, ինքնակարգավորվելը: Խաղայինտեխնոլոգիաների կիրառման ժամանակ առաջադրանքները կատարվում են յուրաքանչյուր երեխայի վարքագիծը որոշող և կազմակերպող գործողության միջոցով ներեխաներին միավորելով մեկ թիմի: Դա գրավում է երեխաների հետաքրքրությունը և որոշում է նրանց հուզական վերաբերմունքը խաղին:

Խաղերի ընթացքում երեխաները չպետք է կասկածեն,որ սովորում են և ակտիվությունը կապված է հենց խաղի կանոնների հետ:

Այն պետք է հետաքրքիր լինի, որպեսզի երեխան պատրաստակամորեն ենթարկվի կանոններին:Արդյունքը գնահատվում է երկու տեսանկյունից.այսինքն՝ երեխաների և ուսուցչի տեսանկյունից: Արդյունքը երեխաների տեսակետից գնահատելիս հաշվի ենք առնում, թե խաղը ինչ բարոյական և հոգևոր բավարարվածություն բերեց երեխաներին: Կատարելով առաջադրանքներ ՝ երեխաները ցույց են տալիս հնարամտություն, ուշադրություն, հիշողություն: Այս ամենը երեխաներին տալիս է բարոյական բավարարվածություն, մեծացնում է նրանց հավատը սեփական ուժերի նկատմամբ, լցնում նրանց ուրախության զգացումով:Կարելի է նաև խաղերի ավարտին պարգևատրել մասնակիցներին, գովաբանել կամ նրանց վստահել խաղի գլխավոր դերերը:
Այսպիսով,խաղի ընթացքում կարելի է ճանաչել իրեն , ցուցադել սեփական ուժերը,անձնայինորակները և տեղի է ունենում անձի սոցիալականացում:

Սոցիալականացող՝ հասարակական նորմերին և արժեքներին հաղորդակից դարձնելը, միջավայրի պայմաններին ադապտացվելը,ինքնակարգավորվելը:

ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆԴՊՐՈՑՈՒՄ

<< Խաղի ժամանակ երեխաներին տվեք կատարյալ ազատություն և դուք իսկույն կիմանաք նրանց սովորույթներն ու հակումները>>:

Մ.Ի. Դեմկով

Խաղային իրավիճակներում սովորողը դառնում է առավել գործուն և ուշադիր : Խաղերը հաճախ տեղեկատվական բնույթ են կրում և խաղի ընթացքում երեխան կարողանում է ազատ մտածել որևէ հարցի շուրջ , ստանալ նոր պատկերացումներ, նորովի մոտենալ այս կամ այն երևույթին : Քննարկման փուլում նա լսում է ուրիշներիկարծիքները և նույն հարցի վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ, ինքն էլ հնարավորություն ունի համագործակցելու ընկերների հետ և սեփական որոշում կայացնելու: Արդյունքում սովորողը ինքնավստահություն է ձեռք բերում և զարգացնում զննողականությունը :

Խաղային տեխնոլոգիաները տարրական դպրոցում կարելի է դիտարկել որպեսուսուցման մեթոդ, ուսուցման ձև, ինքնուրույն խաղային գործունեություն և երեխայի անձնավորության համակողմանի զարգացման միջոց: Տարրական դպրոցում խաղը կիրառվում է.

- որպես ինքնուրույն տեխնոլոգիա (որը կիրառվում է ցանկացած առարկայի, թեմայիյուրացման և ամրապնդման ժամանակ)
- որպես առավել մեծ ու ընդհանուր համագործակցային տեխնոլոգիայի մի տարր որպես սովորողների ծանրաբեռնվածության բեռնաթափման միջոց: Ի տարբերություն առօրյա խաղերի՝ մանկավարժական խաղն ունի որոշակի հատկանիշներ: Այն ունի նախօրոք հստակեցված ուսուցման նպատակ և դրան համապատասխան՝ կանխատեսվող մանկավարժական արդյունք:
- ավանդական ուսումնական գործընթացի ժամանակ գիտելիքի հիմնական աղբյուր հանդիսանում է ուսուցիչը, իսկ խաղի ժամանակ գիտելիքի որոշակի աղբյուր չկա,
- ուսումնական գործընթացն իրականացվում է մենախոսության (ուսուցիչը բացատրում է, սովորողը լսում) կամ երկխոսության (սովորողը հարցեր է ուղղում, ուսուցիչը պատասխանում է, կամ ստուգման նպատակով ուսուցիչն է հարցեր ուղղում սովորողներին) միջոցով, իսկ խաղն իրականացվում է գործողությունների լեզվով, և
  խաղի մասնակիցները ակտիվ հաղորդակցման միջոցով սովորում և սովորեցնում են:

- խաղային գործունեության ժամանակ աշակերտները ազատ են ու անկաշկանդ, և չեն ճնշվում սեփական «,Ես>>-ը արտահայտելու մտքից:

Ներկայացնեմ խաղի մի օրինակ, որ նպատակահարմար է կիրառել կրտսեր դպրոցում երեխայի ուսումնական ակտիվության ձևավորման համար :

<<Տառերի թռիչք>> խաղ

Խաղի նպատակը՝ զարգացնել և ամրակայել հնչյունների վերաբերյալ աշ ակերտների գիտելիքները , արագ կողմնորոշվելու ունակությունը , ձևավորել ինքնուրույնություն և ճկուն դարձնել մտածողությունը :

Խաղի ընթացքը՝ Խաղին կմասնակցեն դասարանի բոլոր աշակերտները : Խաղավարն ասում է տարբեր հնչյուններ , որոնցով մյուս աշակերտները պետք է կազմեն բառեր : Նա հուշում է , թե տվյալ հնչյունը որտեղ պետք է լինի ՝ բառասկզբում , բառամիջում , թե բառավերջում : Օրինակ ՝ ա՝ բառասկզբում ՝ արև , աստղ , անտառ , կ ՝ բառամիջում ՝ երկինք , երկար , թանկագին , լ ՝ բառավերջում ՝ լսել , սիրել և այլն : Խաղն կարելի է անցկացնել դասի վերջում աշակերտների ֆիզիկական հոգնածությունն թոթափելու համար :

«Գտիր ձայնավորը>>:Խաղավարը կարդում է բառեր: Անհրաժեշտ է ծափ տալ այն դեպքում, երբ մասնակիցները լսում են օրինակ ա տառը: Պարտվում են այն մասնակիցներնովքեր ծափ են տալիս սխալ բառերի դեպքում: Այսինքն այնպիսի բառերի, որոնք չունեն
ձայնավոր ա-ն:

Այսպիսով, այս առաջադրանքները կրում են անհատական բնույթ, որի ընթացքում աշակերտները ձեռք կբերեն ինքնուրույն աշխատելու , ազատ մտածելու և արագ կողմնորոշվելու կարողություններ , ինչպես նաև կկարողանան կատարել նմանատիպ այլառաջադրանքներ :

ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԵՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

<< Խաղը չպետք է անհետանա երեխայի կյանքից։ Այն պետք է շարունակի իր տեղն ունենալ թե՛ դպրոցական ուսուցման, թե՛ աշխատանքային գործընթացում>>։

Լ.Ս.Վիգոտսկի

Այս տարիքում արդեն երեխաների մոտ ցանկություն է առաջանում ստեղծելու իրենց սեփական աշխարհը. երևակայության բուռն զարգացումներով, երազանքներովև բանաստեղծական խաղերի մտահղացումներով; Այս դպրոցում արդեն խաղերի հիմնական նպատակն է հաստատվելը հասարակության առաջ , հումորային երանգը , հաղթելու ցանկությունը, խոսքի զարգացումը։

Գործնական խաղերն օգտագործվում են առաջացած խնդիրների ամբողջականությունը նոր կերպ լուծելու համար, նյութի ամրացումը ստեղծագործական ունակությունների զարգացումն։ Այն սովորելը հնարավորությունէ տալիս աշակերտին ունենալ լավ հիշողություն և առարկան սովորել, ընկալեն տարբեր ձևերով։

Հետազոտական խաղեր, որոնք օգնում են իրականացնել կոնկրետ հետազոտություններ՝ օրինակ կազմակերպել էքսկուրսիաներ ,խնդիրների լուծումներ, մշակել շարադրություն գրելու եղանակներ և այլն;

ԽԱՂԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐ

Այս մեթոդների և մեթոդական հնարների վրա ձևավորվում են աշակերտների գիտելիքներն ու հմտությունները, որոնք բաղկացած են հատուկ բովանդակությամբ:Դրանցից են՝

- Մեթոդներ՝ երեխաներին սիրելու արվեստը, ընտրության ազատությունը, իմացության հաճույքը:

- Անհատական մոտեցումը՝ անձի ուսուցումը, ընդունակությունների զարգացումը, ինքնադիտումը,հաջողության վերապրումը:
- Շփման վարպետության՝ ազատ խոսելաձև, ռոմանտիկ մթնոլորտ,փոխադարձության օրենք:
- Ընտանեկան մանկավարժության ռեզերվներ՝ ծնողական շաբաթներ, ծնողականպաշտամունք և այլն:

ԽԱՂԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Խաղերի դասավանդման նպատակը կայանում է նրանում, որ պետք է ամրապնդել երեխայի՝

- ուշադրությունը
- մտածողությունը
- երևակայությունը
- հիշողությունը

Եվ առանց այդ հատկանիշների անհավատալի է երեխային ամբողջովին զարգացնել: Տարրական դասարաններում ուսուցումը կազմակերպելիս պետք է հաճախ ստեղծել խաղային իրավիճակներ և աշակերտներին հնարավորություն ընձեռել՝ մտնելու իրենց համար հիմնական և կարևոր համարվող գործունեության ոլորտ: Կա ճշմարտություն, որ խաղն առավել գրավիչ է դարձնում ուսուցումը, կենտրոնացնում երեխայի ուշադրությունը, խթանում մտածողությունը: Խաղի միջոցով ճշգրտվում և ընդլայնվում են երեխայի պատկերացումները շրջապատի, բնության, հայրենիքի, ծնողների և ընդհանրապես աշխարհի մասին, դաստիարակվում են ուշիմություն, աշխուժություն, զսպվածություն և այլ դրական հատկանիշներ: Խաղը երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատարելագործման կարևոր միջոց է, որը բացահայտում է նրա բնավորության շատ կողմեր: Խաղի իջոցով երեխան կրթվում է ու դաստիարակվում: Խաղի ընթացքում երեխան դրսևորում է որոշակի ինքնուրույնություն, ձգտում է ինքնահաստատման, ձևավորվում են բնավորության որոշակի գծեր: Խաղի ընթացքում երեխաները ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղն ապահովում է հասակակիցների հետ փոխշփումներ, հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ:

ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՄԻՋՈՑ

<<Ամեն լավ բանի հիմքն ընկած է խաղի մեջ և բխում է նրանից։Ինքը՝խաղը դատարկ զվարճանք չէ.այն ունի բարձր խորհուրդ և խորը իմաստ>>։
Ֆ.Ֆրյոբել

Մանկավարժական գործընթացում խաղը համարվում է կրթադաստիրակչական միջոց։ Այն հնարավորություն է ընձեռում՝ երեխաներին հաղորդել որոշակի գիտելիքներ, մշակել հմտություններ ու կարողություններ, զարգացնել ուշադրությունը, հիշողությունը և երևակայությունը։ Խաղը երեխաների կյանքի և գործունեության կազմակերպման, լայն դաստիրակչական խնդիրների լուծման, ստեղծագործական ունակությունների զարգացման և ինքնուրույնության դաստիրակության միջոց է։ Եվ վստահ կարելի է ասել,որ խաղի շնորհիվ է երեխան ճանաչում շրջապատող միջավայրը, ուսումնասիրում այն։

Երեխայի համար այն նույն նշանակությունն ունի, ինչ աշխատանքը մեծահասակի կյանքում։ Բոլոր երեխաները սիրում են խաղալ։ Նախ՝ խաղը հանդիսանում է ոչ վերբալ խոսք, հաղորդակցման միջոց՝ մեծահասակների, հասակակիցների և շրջակամիջավայրի հետ շփման համար, և բացառություն չէ նաև խաղի միջոցով մասնագետի և երեխայի միջև կոնտակտի ստեղծումը։ Երեխան արտահայտումէ իր մտքերը, ապրումները, դրսևորում է հոգեկան բովանդակությունը։ Զարգացմանն ուղղված աշխատանքում էլ խաղերը դառնում են գործիքներ ՝ զարգացնելու այս կամ այն հոգեկան ոլորտը, գործընթացը։

ԽԱՂԻ ՕԳՏԱԿԱՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

<<Խաղը երեխայի զարգացման աղբյուրն է:Այն ստեղծում է մոտակա զարգացման տիրույթները>>:
Լ.
Ս.Վիգոտսկի

Օգտագործելով խաղը որպես դասընթացների հիմնական տեսակը թույլ է տալիս լուծել մի շարք խնդիրներ: Յուրաքանչյուր խաղ որոշակի օգուտ է բերում երեխայի զարգացմանը: Այս գործունեության շնորհիվ այն անընդհատ առաջադրանքների նոր լուծումներ գտնելու և գործնականում կիրառվում է այն, ինչ նա սովորել է:

- Ամրացնում է արդեն ուսումնասիրված նյութը.
- Հաղթահարել է նոր հմտություններ;
- Մշակում է ճանաչողական կարողություններ.
- Թույլ է տալիս երեխային նմանել իրավիճակները եւ լուծել խնդիրները.
- Սովորեցնում է կենտրոնանալ;
- Զարգացնում է ֆանտազիան և մտածողություն;
- Թույլ է տալիս գտնել նոր գիտելիքների եւ հմտությունների անհրաժեշտություն.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խաղը երեխաներին ստորադասելու, նրանց վարքը ամբողջ թիմի առաջադրանքների
հետ համակարգելու կարողություն է : Վերջապես, խաղի ընթացքում երեխան տիրապետում է բարոյական նորմերին և վարքի կանոններին, որոնք որոշիչ դեր են խաղում նրա անհատականության ձևավորման գործում:

«Խաղային տեխնոլոգիաների կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում » թեմայի շուրջ հանրակրթական դպրոցում անցկացրած ուսումնասիրությունների վերջնարդյունքներն են՝

- Կրտսեր դպրոցականների համար ամենակարևոր ուսուցանողգործողություններից մեկը մնում է խաղը :
- Խաղը հնարավորություն է տալիս տարրական դասարանների սովորողներին ստացած գիտելիքները ապագայում կիրառել, նոր գիտելիքներ ստանալ և սեփական փորձի հիման վրա ինքնուրույն դրանք կիրառել կյանքում :
- Երեխաների շրջանում անցկացված հետազոտության հիման վրա մշակվեց կրտսեր դպրոցականի ուսուցման ակտիվությունը ապահովող խաղերի անցկացման մանկավ արժական պայմանները : Դրանք են՝ խաղը երեխաների մեջ դաստիարակում է ինքնուրույնություն , կյանքի հետագա դժվարությունները
ինքնուրույն հաղթահարելու կարողություններ , խաղը հնարավորություն է տալիս երեխաներին անկաշկանդ արտահայտել իրենց մտքերը, տեսակետները, կարծիքները , խաղը նպաստում է երեխայի սոցիալականացմանը, ինքնասպասարկմանը, ինքնավստահությանը, ինքնաճանաչման զարգացմանը :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ,Ե., 2012

2. ԽաչատրյանՍ.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006,

3. www.aniedu.am Կրթության ազգային ինստիտուտ